ՊԱՇՏՈՆ	ՏՏ նախագծերի մենեջեր
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ	Լրիվ դրույք
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ	ք. Երևան, ՀՀ
ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ	Հնարավորինս շուտ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ	14/08/2025
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ	14/09/2025
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ	Անորոշ ՝ 3 ամիս փորձաշրջանով

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է մոտիվացված և խելացի թիմի անդամի, ով կմիանա թիմին որպես Նախագծերի մենեջեր:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Իրականացնել տարբեր նախագծեր՝ սկսած նախաձեռնման գործընթացից մինչև փակման գործընթացը (նախաձեռնումը, պլանավորումը, իրականացումը, վերահսկումը, փակում),
- Սահմանել և վավերացնել նախագծի նպատակները և նրա շրջանակները,
- Իրագործելիության հստակեցում, այլընտրանքների որոնում, նախագծի առաջարկի նախապատրաստում, բյուջեի և ժամանակացույցի մշակում, մեկնարկային թիմի ստեղծում,
- Շահառուների և նրանց ակնկալիքների կառավարում և նախագծի վերաբերյալ հաղորդակցության ապահովում, նախագծի աշխատանքային թիմի հետ պարբերաբար հանդիպումների իրականացում և իրավիճակների վերլուծություն շահառուների պատշաճ տեղեկացվածությունն ապահովելու նպատակով Նախագծերի հիմնավորում, հաստատում և ֆինանսավորման գործընթացի վարում և մասնակցություն,
- Նախագծի փաստաթղթերի ձևավորում և վարում,
- Նախագծի իրականացում, միջանկյալ ստուգում, սխալների շտկում,
- Նախագծի ավարտի ստուգում, Փորձնական Նախագծի թողարկում:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն համապատասխան ոլորտում,
- Նվազագույնը 2 տարվա նմանատիպ աշխատանքային փորձ
- Պրոյեկտների ղեկավարման որակավորման սերտիֆիկատը ցանկալի է
- Հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուների գերազանց իմացություն
- Ռեսուրսների կառավարման փորձ
- Բարդ խնդիրները վերլուծելու և դրանք պարզ առաջադրանքների տեսքով ձևակերպելու ունակություն
- Կարծիքներ և տեսակետներ համադրելու և միասնական լուծումներ առաջադրելու ունակություն
- Բիզնեսի կարիքները և պահանջները հստակ, հասկանալի և կիրառելի ձևով փաստաթղթավորելու և ներկայացնելու ունակություն
- Ֆինանսական և բիզնես պրոցեսների գերազանց իմացություն
- Կոնֆլիկների կառավարման հմտություններ

- Միջին և բարձր օղակի ղեկավարության հետ աշխատելու փորձ
- Հաղորդակցման հմտություններ
- Փոփոխություններին արագ արձագանքելու կարողություն
- Մանրուքների նկատմամբ ուշադրություն
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություններ
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- Ճշտապահություն և պատասխանատվության զգացողություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե ձեր գիտելիքները, մասնագիտական փորձն և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և դուք հետաքրքրված եք միանալու ԱյԴի Բանկի թիմին՝ անցեք հետևյալ հղումով https://idbank.bamboohr.com/careers/62 : Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱյԴի Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «ԱյԴի Բանկ» անվանումով:
ԱյԴի Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը https://www.idbank.am/